


265

L. V. 2



712
MAY 1897



**Տ Ե Ս Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը
ՍՈՒԼԹԱՆԻ ՀԵՏ**

Միացեալ Նահանգաց նախկին Դեպուտատն ի Կ Պոլիս, Վսեմ Տ. ԹԵՐԸԼ, Սէնչուրիի վերջի թուոյն մէջ այս խորագրի տակ յօդուած մը կը հրատարակէ որոյ վրայ ընդհանուր գաղափար մը տալու համար կը թարգմանենք մի քանի կարևոր կէտեր որք ուղղակի յարաբերութիւն ունի Հայկական աղէտներուն հետ:

Այս տեսակցութիւնը տեղի ունեցած է Մարտի 19ին և տեած է երկու ժամէն աւելի:

Վսեմ. Թէրըլ, Սուլթանը՝ ըստ արժանոյն՝ ծանօթացնելու համար իր ընթերցողաց, Բոնիթէմփօրէի Բըվիւի մէջ միտնարի մը կողմանէ հրատարակուած յօդուածէ մը կարտասույզ հնունդը:

"Սուլթանը միշտ յաջողած է սիրաշահիլ այն Եւրոպացիներու սիրտը որոնց հետ քիչ շատ առիթ ունեցած է ծանօթանալ մտերմաբար... Բացի կրօնէ նա կատարեալ Եւրոպացի մ'է... Անձնական արժանիքներու մէջ նա կը գերազանցէ հանգուցեալ Չարը... Իր վերջի բունած քաղաքականութիւնը ոչ թէ անսփառութեան, այլ պարտաճանաչութեան արդիւնք է: Ամէն գովաբանութիւն արժանի է Սուլթանը... Իր բոլոր նախորդներէ աւելի հոգ տարած է ժողովրդի կըրթութեան և բարեկեցութեան համար" ևն. ևն.

Այս փառաբան յախարանէ վերջ Տ. Թէրըլ Եւրոպացի մէջ ի պատիւ Իրեն տրուած առաջին ճաշկերոյթը կը նկարագրէ: Սուլթանը կը նախագահէ եղեր այդ սեղանին, իր աջ կողմը ունենալով զՏիկին Թէրըլ և ձախ կողմը Նորին Վսեմութիւնը: Ամերիկայի նախորդ Դեպուտատն զմայլմամբ կը նկարագրէ սեղանի սպասաւորութիւնն, զարդերը և մասնաւորապէս պատուական զինին որ Գրիստոնեանէն զատ ուրիշ ոք չի ըմպեր եղեր:

"Չեմ վարանիր, կըսէ Տ. Թէրըլ, ձայնակցիլ Չոր. Լիւ վալլիսի և միւս նախորդներու հետ վկայելու թէ Սուլթանն բարձր կտրողութեան տէր մէկն է: Ես կը նկատեմ զայն Եւրոպիոյ ամէնէ կարող վեհապետն: Թէ ն. Վեհափառութիւն որ աստիճանի պատասխանատու է վերջի կտորածներու, ժամանակին տեղեկագրած եմ Ուաշինկթըն:

Սուլթանն նկատելով որ վերջի "չիթութեանց" ճշգրիտ նկարագիրն հրատարակած ուշ է երբէք Միաց. Նահանգաց մամուլն մէջ, ըսած է այս առիթը:

"Օսմ. աշխարհակալութեանց ժամանակ Հայերը, որք Թաթարներէ և

Պարսիկներէ կը հալածուէին շարունակ, մեր պաշտպանութիւն խնդրեցին, և սիրով ընդունուեցան մեր հովանոյն տակ: Օսմանցիք աշխարհակալութեամբ զբաղած լինելով՝ երկրի վաճառականութիւնն ու արհեստներն քրիստոնեաներու, մանաւանդ Հայերու ձեռքն անցաւ, որք օրէ օր բարգաւաճեցան ու գոհ ապրեցան Օսմանեան կառավարութեան տակ, չորս հարիւր տարիներէ աւելի:

"Մահմետականները չորս նուիրական գրքեր կընդունին. Գուրանը, Բոնիթէսուրը, Թալուուրը և Աստուածաշունչը: Արդ մահմետականն ինչպէս կը համարձակի Հայը կոտորել քանի որ Գուրանը կը պահանջէ պաշտպանել բոլոր քրիստոնեաներն խաղաղութեան ժամանակ:

"Իմ նախահայրերէս Սէլիմ Ա. Իւր կրօնաբանութիւնն ունիլ զբարցրնելու համար, խորհեցաւ համակրօնութիւն մտցնել իր բոլոր հպատակ ժողովուրդներու մէջ: Քրիստոնեայցեղերը դժուարութիւններ յարուցին այս առիթը, և Սուլթան Սէլիմ Շէյխ-Իւլ-Իսլամէ Ծէթվա մը խնդրեց զանոնք ջարդելու համար: Շէյխին Ծէթվան դէմ էր այդ գաղափարին:"

Սուլթանը խօսած է նաև Տատեաններու, Կիւմիւշկէրտանի, Բէօշօղլուի ու Փորթուզալ Միքայել Փշայի նկատմամբ: Այդ մասին մի քիչ գաղափար կուտանք զալ անգամ:

ԹՂՔԱՅՑՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՐԸՐԷՆ

Հոկտ. 28

Ուրախալի է տեսնել որ այս տարի քաղաքիս "Ուսթըր Ակադէմիա"ին մէջ երկու Հայ ուսանողներ ունինք, որոց մին Մարտանի գիւղերէն է Պ. Միւրան Տօլմաճեան անուն, իսկ երկրորդը Տրապիզոնցի երիտասարդ մ'է Պ. Արմենակ Յովսէփեան: Այս Պարոնայք իրենց նախնական ուսումն առած են Մարտանի "Անաթոլիա Քօլէճ"ի մէջ, ուր ընթացքին աւարտելէ յետոյ՝ քաղաքական խնդիրների պատճառաւ՝ այս նոր Աշխարհն եկած են մէկ ու կէս տարի առաջ, ու մտած են՝ "Եւրպրնամ Ակադէմիան", և այնտեղից այս տարի փոխադրուեցան քաղաքիս յիշեալ համալսարանն որ աւելի բարձր է: Պ. Տօլմաճեան գիշերօթիկ է, իսկ Պ. Ա. Յովսէփեան ցերեկօթիկ աշակերտ: Սոցա առաջինն իր ուսման ընթացքը կ'աւարտէ մէկ տարիէն, և երկրորդը երկու տարիէն: Մեր կողմէ յաջողութիւն կը մտալթենք երիտասարդ ուսանողաց:

Անցեալ Կիրակի Ազգային Հոգարարութեան նոր ընտրութիւնն կատարուեցաւ Ս. Եկեղեցւոյ մէջ՝ մի կարճ պաշտամունքէ յետոյ: Արժանապատիւ Տ. Մաթոց վարդապետ տասը վայրկեանի չափ խօսեցաւ նախ՝ քուէի նշանակութեան վրայ, ու յորդորեց ժողովուրդն խղճի մտօք կատարել իրենց պաշտօնն՝ ընտրելով ազատամիտ, անկեղծ և փորձառու անհատներ այդ կարևոր պաշտօնին: Յետոյ, Ս. Սեղանին վարագոյրը գոցուելէ վերջ, երկու ատենախօսանք ևս մի քանի վայրկեան խօսեցան նոյն կէտին վրայ. և ապա քուէարկութիւնն կատարուելով՝ նոր Հոգարարութեանն անդամ որոշուեցան Տիարք՝

- Մինաս Արօյեան, Բարբերդցի.
- Պաղտասար Թաշճեան,
- Կրպտ. Թովմաճեան,
- Ա. Յովսէփեան, Տրապիզոնցի.
- Մնկ. Յովսէփեան, Հիւսէյնիկցի,
- ՄՀ. Խ. Ուստա Մանուկեան,
- Յկը. Մարգարեան, Մալաթիացի.
- Ռ. Գաղանճեան, Սեբաստիացի.
- Յ. Գաղանճեան,
- Յովհ. Եաղճեան, Բէսրիկցի,
- Մամա Մարգարեան,
- Պ. Խոյուսճեան, Խրաճցի:

Մ. Ա.

ՀԵՈՒԳՐԱՆՈՒՐՔ

ՊԵՌՆԻՆ, նոյ. 12.—Թուրքիոյ դեսպանատան մէջ ոչ ոք իւր թոշակը ստացած է տարիէ մի վեր: Պաշտօնեաներու պարտքը 300,000 տօլարը կանցնի: Վաճառականները նեղութիւն կուտան իրենց դրամի համար: Կ. Պոլսէն հեռագիր մը երէկ կը հաղորդէ թէ Պեռլինի Օսմ. դեսպան Ղալիպ պէյը՝ առանց հրամանի ձգեց իր պաշտօնը որովհետեւ իւր թոշակը ինը ամիսէ ի վեր ասրուած էր, և իւր պարտատէրերը կը նեղեն գինը: Սուլթանը պաշտօնանկ ըրաւ զՂալիպ պէյը:

Կ. ՊՕԼԻՍ, նոյ. 13.—Սուլթանը Ա. Օսմ. ժապաւէնի պատուանշանը ստաւ Ռուսական արտաքին գործոց նախարար Մուրադիէֆ կոմսին, իր երկու տէրութիւններու մէջ առաջ բերած բարեկամութեան համար:

ԿՈՒՉՈՒԻ

- Քէպիեէթ մէյքըր՝ մը. Դիմել թիւ 109 Հիւմպրլթ Ըսթ. Պրուքլին:
- Քարիւնթըր՝ մը, 63 Ուէսթ 93րդ Փողոց.
- Փէյնթըր՝ մը, գիմել ձէքըպոնի 254 Ուսթ 23րդ Փողոց:
- Դերձակներ, 128 Ո. 42րդ փողոց

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Կ. Պոլիս, նոյ. 13.—Ռուսական Դեսպանատունը կարևոր յայտարարութիւն մը ըրած է Օսմ. Կառավարութեան հետեւալ իմաստով թէ եթէ Թուրքիա մտադրէ յունական պատերազմի տուգանքէն մաս մը յատկացնելու Թուրքիոյ ոպառազինութեան համար, Ռուսիա կը փափաքի յիշեցունելու Թուրքիոյ թէ Ռուս եւ Թրքական պատերազմի առգանքէն 1300000 ոսկի դեռ անվճար կը մնայ, և եթէ Թուրքիա իր քաղաքականութեան հետեւի, Ռուսիա սխիտ պահանջէ այս գումարի վճարուելը: Ռուսական զեկուցումը մեծ տպաւորութիւն ըրած է գիւսնագիտական մարմնոյն վրայ, որ կը հաւատայ թէ Ռուսիոյ այս զեկուցման բուն նպատակն է Թրքական նախորդէ վերակազմութիւնը խոչնդոտել:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ


Նոր Խմբագիրն. — Կը հաճե՞ք ինձ ըսել թէ իշն ընեմ որ թերթս հասարակութեան օգտակար ըլլայ:

Հին Խմբագիրը. — Իր խմբագրական դաղանիք չեմ ուզեր փորձառութիւնս պատմել քեզ, բայց իրեն ազգասիրութիւն այսչափ միայն կըրնամ ըսել որ եթէ իողգը ներկայ թերթին համար խմբագրել հիմակուընէ անօթութեան վարժուացէք:

ՍՈՒՐ ԵՐԿԱԹ

ՊԱՏԻ ՈՒ ԳՐՊԱՆԻ ԺԱՄԱՑՈՅՆԵՐ

Որոց գները 1 Տօլար և 25 ԱԷՆԹէ մինչև 15 Տօլար կերթան:



Սա ժամացոյցի գինն է 8 ՏԼՐ



ՇԱՐԱԿԱՌԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական
Ընկերութեան կողմէն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

	ՏՈՒ	ՍԷՆՑ
Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 10 ՔՐ.

Բաժանորդագրին կանխիկ է:

Հասցէ՝

To the DICKRIS PUBLISHING CO.,
628 Third Ave., New York City.

ՆՈՒ ԵՈՐՔ, ՆՈՅ. 13 1897.

ԵՐԿՈՒ ԽՕՄՔ ՏԻԳՐԻՍԻ ՄԱՍԻՆ

Համոզուած ըլլալով թէ Հայերէն
նոր թերթի մը ևս տեղ ու պէտք կայ
Միացեալ Նահանգաց մէջ, Լրագրոյս
Հրատարակիչը հրապարակ կուզան
այսօր համեստ շարժաթերթով մը:
Նախ հարկ է ըսել թէ ՏԻԳՐԻՍ
ո՛ր է կուսակցութեան կամ խմբի
բերանն է, այլ իւր հրատարակչաց
ազգութեան ու համոզման ներկայա-
ւորութիւնն պիտի ըլլայ հրատարակին
վրայ:

Վերջի տարիներս հրատարակուած
չատ մը անջող լրագրաց պատմու-
թիւնն ու անոնց ըրած, բայց չի կա-
տարած խոստումներն աչքի առջև ու-
նենալով՝ Խմբագրութիւնս չի փափա-
քիր մանրամասնութեան մտնել այս
թերթի ուղղութիւնն պարզելու հա-
մար, այլ կը բաւականանայ այս առ-
թիւ ըսել միայն թէ մեր ուղղու-
թիւնն է ազգային ԼՐԱԳՐՈՒ ՄԸ ՀԸ-
ՐԱՏԱՐԱԿԵԼ բառին ուղիղ նշանա-
թեամբ:

Մեր կողմանէ այսչափս միայն
բաւական սեպելով՝ թող կուտանք
որ մեր հոս չի բացատրածներն ՏԻԳ-
ՐԻՍ աշխատի գործով ու փորձով
ցոյց տալ:

Ն. Ե. ՀԵՐԸԼԻ ՍՈՒՔԵԼՈՒԹԻՒՆ
Ի ՀԱՅԱՍՏԱՆ:

Ն. Ե. ՀԵՐԸԼԻ, Թուրք կառավարու
թեան վարձեալ փաստարանն, Սուլ-
թանի մասնաւոր խնդրանօք երկու
թղթակիցներ ղրկածէ Հայաստան՝ կո-
տորածներու մասին ճշգրիտ լուրեր
հաւաքելու պաշտօնով: Այս թղթա-
կիցներու մին է Պատ. Գ. Հ. Հէփ-
ուորթը, նոյն թերթի կրօնական խմբ-
բագրին, կսկ միւսն է մի հասարակ
լրագրող:

Հէրըլտ կը ծանուցանէ թէ նոյ. 1ին
այս թղթակիցներն Պոլիս հասած են,
ուր մի քանի օր կենալէ վերջ ճամբայ
եւր կնդէպի Տրապիզոն: Պատ. Հէփ-
ուորթի առաջին նամակը, որ հրատա-
րակուած է Հէրըլտի Երկուշաբթի օր-
ուած թուոյն մէջ, կը ծանուցանէ թէ

Տրապիզոնէն մտադիր են երթալ Վան,
անկէ Պիթիւղ, Տիգրանակերտ, Գար-
բերդ, Այնթապ, և յետոյ Աղէքսանդ-
րիա՝ կտրելով Փոքր Ասիան Սեւէն մին-
չեւ Միջերկրական ծով:

Այս ճամբորդներուն պիտի ընկե-
րանան Վեհ. Սուլթանի կողմէն կար-
գեալ երկու ներկայացուցիչներ, և ա-
պահովութեան համար բազմաթիւ
զինուորներ: Պատ. Թղթակցի գրածին
նայելով իրենք ամէն կերպով ազատ
պիտի ըլլան, ու ամէն դիւրութիւն
պիտի ունենան տեսնուիլ վալիներու,
եկեղեցականներու, և ժողովրդեան
տարբեր դասակարգներուն վերաբե-
րող անհաներու հետ և տեղեկութիւն-
ներ ստանալ անոնցմէ, և թէ Սուլ-
թանի ներկայացուցչաց կողմանէ ո՛ր
է միջամտութիւն կամ առարկութիւն
պիտի չըլլայ այս մասին:

Պատ. Հէփուորթի առաջին նա-
մակն, որ ընդարձակ թղթակցութիւն
մ'է, մեզ համար նորութիւն չի պա-
րունակեր, այլ ամբողջութեամբ կըր-
նայ փառաւոր նախարան մը նկատ-
ուիլ ապագայ թղթակցութեանց, որոց
նպատակը պիտի լինի երեւան բերել
"ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտու-
թիւնը, և ոչ այլ ինչ բայց միայն ճշ-
մարտութիւնը": Մենք պատճառ մը
չունինք կասկածելու անուանի Պատ-
ուելիի անկեղծութեան մասին: Հա-
կառակը ապացուցանելու համար չու-
նենալով փաստեր՝ կը հաւատանք թէ
նա իր սեսածն ու լսածը պիտի տե-
ղեկագրէ ճշգրիտ, բայց շատ պատճառ-
ներ կան վստահ ըլլալու թէ երկրի
լեզուին անտեղեկը ճշմարտը բնա-
տեղի պիտի չունենայ ճշմարտութիւ-
նը լսելու: Նա մասնաւոր և յայտնի
նպատակի մը համար հրաւիրուած է
Հայաստան այցելել, ուր գիտութեամբ
կամ անգիտութեամբ պիտի ծառայէ
որոշեալ նպատակին, որպէս ծառայած
են ուրիշներ նոյնօրինակ պարագա-
ներու տակ: Մարգարէ մ'ըլլալ հարկ
չէ ըսելու համար թէ թրքամուլ Հէ-
րըլտի թղթակցաց տեղեկակրութիւն-
ներն նոյն թերթի ցարդ հրատարա-
կած ստույգութեանց երկրորդ սպազ-
րութիւնն պիտի նկատուին: Մենք
կ'ակնկալենք այսուհետեւ կարգալ այդ
լրագրի արեւնոտ սիւներուն մէջ Հայ
ժողովրդեան բերանը դրուած բա-
րեմաղթութիւններ Վեհ. Սուլթանի
կենաց համար:

Ահա այսպէս մարտելով Հայոց ան-
մեղ արեւն Սուլթանը, կ'ընայ այժմ
քրիստոնէից ձեռքով և անոնց մամուլ
միջոցաւ արդարանալ աշխարհի առջև:
Այս պատուարեր պաշտօնն յանձն առ-
նողներուն վրայ կ'աւելնան այսօր ու-
րիշներ ևս: Վսեմ. Թէրըլ կը վարձուի
"Մէնջըրի" միջոցաւ ջատագովել ա-
րեւելքի մեծ մարդասպանն: Պատ.
Հէփուորթը Հէրըլտի կողմէն Հայաս-
տան կերթայ՝ ճշմարտութիւնն երեւան
հանելու համար: Հոս հոն անհասանել
երեւան կեննեն պաշտպան հանդիսա-
նալու Հերըլտի քարոզածներուն, և
ո՛վ գիտէ դեռ քանիներ պիտի վար-
ձուին դժբաղդ Հայոց արեւը դրա-
մով վաճառելու համար:

Բայց ժողովուրդն տուած է իր
դատաւճիւր... Գերագոյն ատեան
մը չըկայ աշխարհի վրայ այս վճիռը
բեկանելու կարող:

ՎՍԵՄ. ԹԵՐԸԼԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

"Ազատեցէք զիս բարեկամներէս,
թշնամիներուս հոգը ինձ ձգեցէք..."
կ'աղաղակէր Յրանաացի մեծ Իմաս-
տասէրը իր հալածանքի ու տառա-
պանքի օրերուն մէջ, երբ բարեկամ-
ներու վոհմակ մը պաշարած էր իր
չուրջը:

Մեզ կը թուի թէ մենք ալ այս
լինելու և չըլինելու ահաւոր օրերուն
մէջ ըսելու ենք մեզ համակրող
Գրիստոնեայ ազգերուն — Սուլթանի
հոգը մեզ ձգեցէ՛ք, դուք ազատեցէք
մեզ ձեր Մուրավիթներու, Հանա-
թներու, Սալպարիներու ու Թէրըլ-
ներու ձեռքէն:

Ուրիշ սիւնակի մը մէջ այսօր կը
հրատարակենք համառօտակի մի
յօդուած, որով Վսեմ. Տ. Թէրըլ
կը պատմէ իր մէկ տեսակցութիւն
մեծ Մարդասպանի հետ, որով կը
ջանայ պարզել Ամերիկացիներուն
առջև Հայկական "խռովութիւններու"
ճշգրիտ պատկերը Սուլթանի նկարած
վրձինով: Սուլթանը ուրիշ կերպով
չէր կրնար բացատրել Հայաստանի մեծ
կոտորածը, բայց երբ Գրիստոնեայ
ազգի մը ներկայացուցիչը՝ Հակոբակ
ճշմարտութեան՝ նոյնը երկրորդել կը
յանդգնի, մեզ կը մնայ մեծանուն
Յրանաացիին ձայնակցիլ:

Ընդունուած ճշմարտութիւն մ'է
թէ դեսպանի մը պաշտօնն է իր
զտնուած կառավարութեան մօտ
ճշմարտութիւնը խղճութիւնը, բայց
երբ Տ. Թէրըլի պէս դիւանագէտներ
իրենց երկրին ու տան մէջը ուրիշին
բերնով կը շարունակեն խօսիլ, կը
հարկադրուի ժողովուրդը մկրտել
դիւանագէտն ամենածանր ածական-
ներով:

Գիտէինք որ Տ. Թէրըլ իր ընդու-
նած շնորհքներուն պարտաւոր էր
փոխարինել, ծառայութիւն մընելով
Արեւելքի "գիտարտ" Վեհապետին,
բայց չէինք կարծիք թէ Հայոց արեւը
պիտի ըլլար Սուլթանի շնորհներուն
արժանաւոր փոխարէնը:

Ո՛վ Աստուած, ազատէ մեզ մեր
Գրիստոնեայ բարեկամներէն, ու մեր
հեթանոտ թշնամիին հոգը մեզ ձգէ:

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԵՏ ՂՐԿՈՒԻԼԸ

Երկու շաբաթ առաջ Ամերիկայ,
աւելի ճիշդ է ըսել Գասթը կարաքնե-
կած էր Հայ ընտանիք մը, Պ. Կարա-
պետ Հիւճճէթեան, իւր կինը և 13
տարեկան աղջիկը: Պ. Հիւճճէթեան
մօտաւորապէս 60 տարեկան ծերունի մը
էր: Հակառակ ամէն ջանքերու, Գաղ-
թականութեան Վարչութիւնը դուրս
չը հանց ծերունին և իւր ընտանիքը,
առարկելով թէ առջինը ծեր լինելով
անկարող պիտի ըլլար գործ գտնել
իւր ընտանիքը պահելու համար: Մե-
րունին նախ յայտարարած էր թէ իւր
քովը ունի 60 Օսմ. ոսկի, իսկ վերջէն
երբ ծանուցուեցաւ իրեն ետ զրկուե-
լու որոշումը, յայտարարեց որ քովը
ունի 1500 տղաւ հնչիւն դրամ:

Հակառակ այս իրողութեան և բա-
րեկամներու կողմէն տրուած երաշ-
խաւորութեան, անկարելի եղաւ այս
ընտանիքն ազատել օրէնքի խտտապա-
հանութենէն:

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք .

-o-
(Նիւ Եորք)

—Հայ Երիտասարդաց Թանգարա-
նի Միութիւնն ընդհանուր մի ժողով
ունեցաւ անցեալ շաբաթ երեկոյ Ս.
Բարթոլոմէոսի թեմատան մէջ ընդ
նախագահութեամբ Տ. Ա. Շիշման-
եանի, և որոշեց Թանգարանն փոխադ-
րել նոյն շէնքի մէջ, ուր մասնաւոր
սենեակ մը պիտի յատկանայ այդ նպա-
տակի համար:

—Տ. Տէր Ստեփանեան չի կարո-
ղանալով վաճառել իւր դեղարանն՝
յետաձգեց այս տարի ատամնագործու-
թեան վարժարան մտնելը:

—Փրօֆ. Եէշիլեան, որ երկար ժա-
մանակ դատախօսած է Գարբերդի Մի-
սիոնարաց Բոլէճի մէջ, Նիւ Եորք
եկած է:

—Բարեգործական Ընկերութեան
Ընդհանուր ժողովը ի նիստ գումարե-
ցաւ անցեալներն 23րդ փողոցի Եկե-
ղեցոյն մէջ՝ պաշտօնէից ընտրու-
թիւն կատարելու համար Պատուե-
լի Հայկունի Ատենապետ ընտրուեցաւ,
Փրօֆ. Կ. Եէշիլեան՝ Ատենադպիր, Տ.
Չատրճեան՝ Գանձապետ, և Տիարք Ար-
զումանեան ու Շիշմանեան՝ Խորհրդ-
դական անդամներ:

—Տ. Թորոսեան մօտերս կը հրա-
տարակէ նոր մէթոտով անդրիներէն
ուսուցանող ընթերցարան մը 250
երեսներէ բաղկացեալ:

—Կիրեղ Սարկաւազ Պապայեան,
որ ժամանակէ մ'ի վեր Ամերիկայ կը
գտնուէր, անցեալները քաղաքէն Ս.
Էջմիածին մեկնեցաւ:

—Ն. Եորքի նոր քաղաքապետի ընտ-
րութեան առթիւ Հայք ևս մի քաղա-
քական ժողով ունեցան Հոկտ. 30ին,
չաբաթ երեկոյ, ի Մուրէյ շիւ շօլ՝
Մէթ Լոյի արժանաւորութիւնն ջատա-
գովելու համար: Այս ժողովոյն կը
նախագահէր Տ. Յ. Թավչիան: Բացի
Ամերիկացիներէ, ազգայիններէ
բանաստեղծներն Տրք. Յ. Հայկունի, Մ.
Գիթէճեան և Ս. Բէպապետն Հայ փա-
տարանը, որոյ գրասենակն է ի 48 Վոլ
Ըսթրիտ: Տ. Բէպապետի ատենախօ-
սութիւնն հրատարակուած է Հայքի
վերջի թուոյն մէջ:

—Սարգիս Երկանեան, Տրապի-
զոնցի իւզաներկ նկարիչն, որ ընթա-
ցաւարտ մ'է Փարիզի դեղարուեստա-
կան վարժարանէ, և որ ծառայած է եր-
կար ատեն համալսարան Ժէնովի քով,
վերջերս Փարիզէն Նիւ Եորք եկած է:
Տ. Ա. Ալէոն յանձն առած է դիւրու-
թիւն ընծայել Հայ նկարչին՝ անոր զը-
ծած պատկերներն վաճառելու հա-
մար, և տեղ մը յատկացուցած է ի-
րեն 55 Սիւրըլ ըսթրիթի շէնքին մէջ,
հոն իր արուեստով զբաղելու:

—Սր. Բարթոլոմէոսի Հայկազ-
նեան կաճառը Ընդհ. ժողով մ'ունե-
ցաւ իր սրահին մէջ ընդ նախագա-
հութեամբ Պատ. Իւհաննայի և ներ-
կայութեամբ երեսուցի չափ անդա-
մոց, և որոշեց ամսոյս 12էն մարդանքի
սկսիլ, որն ընդհատուած էր նոր
չէնքի շինութեան առթիւ: Այս շէն-
քի մէջ կաճառն մի առանձին սրահ
պիտի ունենայ իր արժանաւորութեան
տակ:

—Արժ. Վահրամ Գաւանայ Մը-
սրեան Ս. Պատարագ մատոյց անց-
եալ Կիրակի օր Ս. Ոսկերեան Եկեղ-
եցոյ մէջ, ու մկրտեց Տ. Կարապետ
Չանգալեանի դուստին:

—Տըթ. Պ. Թաշճեան Պոսթոնէն,
քաղաքս եկաւ:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԵՒ ՆՈՒՆԻՐ

Հետեւեալ 12 բառերն նշանաւոր
 անձանց, քաղաքաց և գետնոց անուն-
 ներ են: Պակասեալ գրերն ով որ կա-
 բեանայ ուղիղ կերպով լեցնել և պա-
 տասխանն մեզ զրկել մինչև Դեկ-
 81, հինգ հատ 2 սէնթնոց կտրոն պի-
 տի ընդունի իբր նուէր: Ամէն պա-
 տասխանի հետ զրկուելու է 4 սէնթի
 նամակագրոջմ:

Ն . Բ . Է .	. Ա . Հ . Ա . Ն
Հ . Թ .	. Ա .
. Թ . Թ . Ն	. Ա . Ա . Ս
Ո . Ա . Ի . Կ . Ը .	. Ա . Դ . Ն
Ն . Ի . Թ . Գ .	. Ն .
Տ . Գ . Ի .	. Ո . Ո . Պ . Ս

—Տ. Մարութեանի կինն և երեք
 զաւակներն անցեալ շարժու Նիւ Եորք
 հասան Գարբըրէն: Տ. Մարութեանի
 կրտսեր որդին Թ. Միւսթեան Փոխ-
 թանգարանապետն է:

—Պ. Չախուրեան պողովաճառի
 խանութ բացած է ի թիւ 403 Ուսէթ 16
 րդ փողոց:

—Պ. Թախտապուռնեան, Ռոպէրդ
 Գոլէճի նախկին աշակերտնէրէն մին,
 Նիւ Կորթէ քաղաքս եկաւ երկու շա-
 բաթուան արձակուրդով:

—Տ. Յովհ. Չուլճեան և Օր. Պէ-
 զազեան Գոլէճ Փոյնթի մէջ ամուս-
 նացան անցեալ Կիրակի օր: Պսակի ա-
 րարողութիւնը կատարեց Արթ. Մսրը-
 լեան Վահրամ Բահանայ, կնքակայ-
 րութեամբ Տ. Յ. Ղումրիկեանի: Հար-
 սանեկան հանդէսն խիստ շքեղ եղաւ,
 որոյ ներկայ էին երկու սեռէ խուռն
 բազմութիւն մը բարեկամաց և ազ-
 գականաց:

—Քաղաքիս Հայ Աւետարանա-
 կանաց ժողովարանին մէջ, անցեալ
 Կիրակի օրն, մի հոգեհանգստեան
 պաշտօն կատարուեցաւ Հայաստանի
 կտորածներուն զոհ գացող մարտի-
 րոսաց ի յիշատակ: Այս առթիւ Տի-
 կին Տօնճեան դաշնակաճեց. Օրիորդ
 Գոսթիկեան «սօլօ» մը երգեց ու
 երգեցիկ խումբն՝ օրուան յատուկ եր-
 գեր: Պատ. Հայկակ Սաղոյեան, նոյն
 Եկեղեցոյ քարոզիչն, ու Պատ. Կրին
 խօսեցան Հայերէն, Պատուելիք Ս. Ս.
 Կրիկըն և Յ. Պ. Բիշըրտս Անգլիա-
 րէն լեզուաւ: Երեք հարիւրի չափ
 երկրպագուք ներկայ էին այս պաշ-
 տաման:

—Ըամիթէ և Բաֆմըն ընկերու-
 թիւնն, որ մետաքսեայ ժապաւէն
 հիւսելու ընդարձակ գործատուն մը
 ունի 130րդ փողոցի վերայ, յիսունի
 չափ նոր ճախարակներ (լուս) աւել-
 ցուցած է իր գործին մէջ: Բանի մը
 շարաթէն նոր ստայնանկներու պէտք
 պիտի ունենայ յիշեալ տունն:

—Պ. Երկանեան՝ Ալէոն և Բէ-
 լէկեան ընտանեանց իւզաներկ պատ-
 կերները պիտի գծէ:

—Տ. Ղումրիկեան մի նոր խանութ
 ևս հաստատած է քառասուն երկուեր-
 րորդ փողոցին վրայ:

—Տիրաբ Շիշմանեան և Բէլէկեան
 Բարեգործական Ընկերութեան գիւ-
 նին օգնական անդամներ ընտրուած
 են քանի մ'օր առաջ:

(Նիւ Ճէրզի)

—Ճէրզիի Ազգ. Հոգաբարձու-
 թեան վերջի նիստը տեղի ունեցաւ
 անցեալ շաբթու Արթ. Վահրամ Բա-
 հանայի տունն, ընդ նախագահու-
 թեամբ Պ. Չարչաֆճեանի: Խորհրդակ-
 ցութեան գլխաւոր նիւթն եղաւ այդ
 նիստի մէջ կտոր մը հող գնել ի
 Ուէսթ Հոպոքն՝ վրան կառուցանելու
 համար փայտաշէն սրահ մը որ ծա-
 ոայէ՝ առժամանակեայ կերպիւ իբր
 ազգային ժողովարան:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՄԲԵՐ

ԿԻՆԸ

Կինը աւելի պզտիկ մարդն է:
 Թէ՛նի՛ՍԸՆ

Կինը, նման իշխաններու, սակա-
 ւաթիւ անկեղծ բարեկամներ ունի:
 ԼԵՅԹԵԼԹԸՆ

Խնդրուած սէրը Լաւ է, բայց չը-
 խնդրուած շնորհուիլը աւելի Լաւ է:
 ՇԷՅՔՍՓԻՐ

Խօսելով կիննրու վրայ, կրնանք
 յանդիմանել և ծաղրել զանոնք, սա-
 կայն կրնանք կենակցիլ իրենց հետ,
 բայց առանց իրենց չենք կարող ապ-
 րիլ:
 ՏԸՐԻՅՏԸՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՇԱՀՊԱՋԵԱՆ ԵՒ ՍԱՐԱՅԵԱՆ

Թիւ 239 Իսթ 27րդ Փողոց,
 Նիւ ԵՈՐԿ:

Համեղ Կերակուրներ, չափաւոր գին,
 մաքուր կահաւորեալ վարձու սեն-
 եակներ գիւրամատչելի գներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Պ. ԳԵՈՐԳ. Ա. ՂՈՒԷՍ ԵՍԵԱՆ

Թիւ 388 Երրորդ Աֆիւ, Նիւ ԵՈՐԿ:

Գիւրամատչելի գներով արևելեան
 մաքուր կերակուրներ:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Կ. Ա. Գ. Դ. Ե. Ջ. Ա. Կ.
 Գիւ 628 3րդ Աֆիւ, Նիւ ԵՈՐԿ:

Տեղափոխեալ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ
 Ընտիր կերպասեղէններէ վայելուչ
 հագուստներ կը շինէ գիւրամատչելի
 գներով:

ՈՒՆԻՏՉԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ,
 472 3րդ Աֆիւ, Նիւ ԵՈՐԿ:

Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ պատիւ ունի ծա-
 նուցանել թէ գեղագիրներ կը պատ-
 րաստէ խիստ աժան գրիներով:

ՅՈՒՍԱՆՈՒՄ ՍԻՐԱՀԱՐԸ

Ա.

Քեզ կորուսած օրէս ի վեր առջի անգամ այս ցորեկ
 Բայլամուրը պարտէզ մտայ պայտ մ'ընել սրտաբեկ:
 Ձիւնը պատած էր ամէն կողմ, ճամբաները խորս ու բուրս.
 Երկինք՝ վճիտ, արև՝ պայծառ, օրն՝ անսովոր, օդը՝ ցուրտ:

Ես շրջեցայ մտամուրը, այցելեցի այն վայրեր,
 Ուր, ծառերու հովանոյն տակ, անցեալ ամառ մի գիշեր,
 Աստեղազարդ երկնից առջև, ու մեզ գիտող լուսնի դէմ,
 Տեղի տալով իմ խնդրանաց, մեղմիկ մ'ըսիր՝ «բուկե եմ»

Ես կանգնեցայ այն ծառին քով որոյ թանձր շուքին տակ,
 Դիւ լեցիր զիս շատ անգամ, սիրոյս սուտը արձագանք.
 Եւ վառեցիր հուր սոսկալի իմ անվրդով մտքի մէջ,
 Որ կ'այրէ զիս, կ'այրէ հոգիս սիրոյդ կրակն՝ հուր անշէջ:

Բայց խոստումդ որուն վկայ եղան երկինք և Աստուած,
 Դու գրեցիր քիչ ատենէն, ուրացար զիս անկասկած.
 Կեանքս այդ օրէն բեռ մ'եղաւ ինձ, սիրտս աւրակի դար-
 ձուցիր, Անմխիթար դժբաղդ մ'եղայ երբխոստումդ գրեցիր:

Բու սիրոյդ հետ կեանքիս գարունն անդարձ կերպիւ
 Հեռացաւ, Այս պարտիդ նման սիրտս ալ ձիւներու տակ ծածկեցաւ.
 Բայց, հէ՛գ պարտէզ, դու մի տխրիր, երբ գարուն գայ այս
 ձիւներ
 Շուտ կը հալին սառնամանիք, ու կը ծլին ծաղիկներ:


Այս մերկ ծառերն օր մը պիտի հագնին կանաչ ու ծաղիկ,
 Թանձր ձիւնի տակէն պիտի փուռնին նորէն վարդենիք.
 Սա յուսահատ ճնճուկներ պիտ' գան ուրախ ու զուարթ
 Երգել, ցատկել ծառէ ի ծառ, ծաղկէ ծաղիկ, վարդէ վարդ:

Է՛հ, խեղճ թռչնիկ, ինչո՞ւ ուրեմն յուսահատած
 կը դողաս, Մերկ ձիւղերու վրայ նսգած տխուր տրտում մ'իշտ կուլաս.
 Բու կորուստդ անսովոր չէ, զայն կը գտնես գալ ամառ,
 Այս ձմեռը շուտով կ'անցնի, գարուն պիտ' գայ անպատճառ:

Թուր գնա, բոյնդ մտիր, ո'վ միամիտ ճնճուկ,
 Մխիթարուէ, զուարթացիր, մի արտասուէր, ով խեղճուկ,
 Թող որ ես լամ, զի իմ կորուստ շատ ծանր է, անդարման.
 Չայն գտնալու համար բնաւ չեմ սպասեր ես գարնան:

Ձի ինձ համար չի գար գարուն. իմ ձմեռս է լիալիբ,
 Դժբաղդութեան սառնամանիք իմ սրտիս մէջ շին հալիբ.
 Ինձի մուտք ևս արև, լուսին, աշխարհք չ'ունին հրապոյր,
 Աստեղք մարած են ինձ համար, վարդ ու ծաղիկ չ'ունին
 բոյր:

ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ՊԵՏԻ ՉՈՒՆԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ



Ասոնց նմանները չորս և հինգ տոլարի կը ծախուին | ուրիշ տեղեր
 Մեր գինն է 98 Սէնթ և 1 ու կէս տոլար: Կտրոններ կ'ընդունուին:

—Տխուր պատմութիւն մ'է որ կ'ստիպես զիս կրկնել, Հրանոյշ. երբ լսես զայն դու ալ ինծի պէս պիտի լսաս իմ անդաման կորուստիս համար:

—Հոգ չէ, Արմէն, պատմէ որ լսեմ. քո ցաւոց ու ուրախութեանց պարտաւոր եմ հաւասարապէս մասնակից ըլլալ: Դեռ շաբաթ մ'առաջ խոստում ու երգում ըրի այս մասին Աստուծոյ և անոր պաշտօնէին առջև:

Այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար Նիւ Եորք Սէնթ-Րըլի մի սրարչաւ կառախմբին մէջ, երկու նորաստեղծ ամուսնեակներու մէջտեղ, որք իրենց մեղրալուսնի ճամբորդութիւնը լրացուցած՝ Նիւ Եորք կը վերադառնային:

—Մտիկ ըրէ ուրեմն, ըսաւ Արմէն, և աչքերը սրբելով շարունակեց այսպէս.

«Ես Հայ ծնողաց զաւակ եմ: Հայրս Կալկաթացի մի խոտապահանջ դրամատէր էր: Իմ մանկութեան առաջին տարիները համեմատաբար բանտարկեալի մը պէս անցուցի մեր տան մէջ փակուած: Հազիւ ութը տարեկան էի երբ քոյրս ծնաւ: Կարելի չէ քեզ նկարագրել թէ ինչ մեծ ուրախութիւն էր ինձ համար ընկեր մ'ունենալ տան մէջ: Ժամերով կը նստէի անոր որորոցին քով ու մանկական անհամբերութեամբ կ'սպասէի անոր արթննալուն որ կարենայի զայն բազկացս մէջ ընդունիլ: Անոր գեղն ու հրեշտակային անմեղութիւնն զիս մագնիսացուցին իրեն: Օրէ օր կը զօրանար սէրս: Կը պաշտէիք զիրար»:

«Մարգարիտ հազիւ 7 դարուններ բոլորած էր երբ Հայրըս որոշեց զիս Ամերիկայ ղրկել՝ կրթութիւն առնելու համար: Բնաւ չը պիտի մոռնամ այն օրն յորում բաժնուեցայ Հայրական տունէս: Տարիներ անցուցի Նիւ Եորքի մէջ. և երբ Հնդկաստան վերադարձայ՝ ծնողքս, մեծ ուրախութեամբ ընդունեցին զիս: Միշտ կը յիշեմ այն բոպէն երբ առջին անգամ ծնողքս տեսայ, որք շատ մը բարեկամներու հետ եկեր էին զիս դիմաւորելու համար: Բայց Մարգարիտը չէի տեսներ հոն: Ուր էր մանկութեան ընկերս. ո՞ր էր Մարգարիտ: Դեռ այս հարցում չըթանցս վրայ էր երբ չէպի ինձ վազեց բարձրահասակ աղջիկ մը վարդի մը դաս սիրուն, ու շուտով մը աւելի նազիկ: Թեւեթր տարածած նետուեցաւ բազկացս մէջ: Մարգարիտս էր. որ կուլար լռիկ, և իր հեկեկանաց հետ կ'ըսէր՝ «Եկար վերջապէս, Արմէն, եկար վերջապէս»...: Իւր քաղցրիկ դէմքին վրայ ու իւր անուշ ձայնին մէջ տեսակ մը բանաստեղծութիւն կը զգայի. իր աչաց մէջ տարօրինակ արայայտութիւն մը կար զոր չէի կրնար կարդալ: Բայց սորվեցայ վերջէն. քո աչքերուդ մէջ կարդացի զայն, Հրանոյշ, երբ առջին անգամ սէրս յայտնեցի քեզ: Մարգարիտ կը սիրէր ուրիշ մը...: Ես առաջինն եղայ որ զարթուցի զայն իր երջանիկ երազներէն: Դեռ անատեն չէի գիտեր թէ եղբոր ու քրոջ սէրը գերազանցող մի շատ աւելի հզօր բան կար այսօրինակ սիրոյ մէջ»:

Արմէն պահ մը կանկ առաւ հոս. կարծես թէ չէր ուզեր աւելի յտառջ երթիլ: Հրանոյշ թախանձեց սակայն պատմութեան մնացեալը լսել:

«Մի քանի օրերէ վերջ, ըսաւ Արմէն, պարզ երեկոյ մը պարտէզ գնացինք պտոյտ մ'ընելու համար: Երբ առանձին էինք, Մարգարիտ իբր գաղտնիք խոստովանեցաւ ինձ ամէն բան: Ինչ գատ ուրիշի մը չէր կրնար իր սիրտն բանալ այդ պարագաներու տակ, զի իր ընտրած անձն մեր վաղեմի թշնամիին որդին էր: Խեղճ աղջիկն ի գոր ստեղծ իմ օգնութիւնս ինչքան ծնողացս հաճութիւնն առնելու համար. բայց ես ոչ միայն մերժեցի, այլ խնդրեցի եւ ըսպառնացայ մոռնալ այդ երիտասարդ: Մարգարիտ զուր տեղը ջանաց համոզել զիս: Լացաւ, շատ լացաւ. ձեռքերս ու այտերս արտասուօք թրջեց: Բայց քարացած էր իմ սիրտս»:

«Հրանոյշ, թող որ չի կրկնեմ Հօրս այն խօսքերը, որք տեղացին Մարգարիտի դիմուն, երբ անոր գաղտնիքն մատնեցի իրեն: Դժբաղդ քոյրս, որ ծանր բառ մը լսած չունէր երբէք, թուք ու մոռի առարկայ նշաւ: Յանցանքիս ծանրութիւնն զգացեր էի. բայց շատ ուշ էր»:

«Սա անմեղ սիրահարութիւնը բեկանելու համար, Հայրս հրամայեց որ պատրաստութիւն տեսնուի քանի մ'օրէն Մարգարիտն Լօնտոն՝ գիշերօթիկ վարժարան մը ղրկելու համար: Յոտից ց'զլուխ դողալ սկսեց Մարգարիտ, երբ լըսեց առ դատավճիռ, ու Հօրս ստոր իյնալով ըսաւ.

—Ո՛հ, Հայր իմ, գթա՛ ինձ. ըրէ ուրիշ ինչ որ կուզես, բայց զիս տունէն մի հեռացնէր»:

—Լռէ՛, անհնազանդ ու ապերախ աղջիկ, պատասխանեց նա բարկութեամբ. պէտք է անպատճառ հառանաս Հնդկաստանէն այդ անպիտան տղան մոռնալու համար: Իմ անդառնալի հրամանս է սոյս:

—Քո կամքը թող ըլլայ, Հայր, պատասխանեց Մարգարիտ ոտքի կանգնելով. ալ չի պիտի աղաջեմ, բայց ժամանակը պիտի գայ յորում ամէն բան զոհել պիտի ուզես այս ամէնը ըսած չըլլալու համար: Ես մեղք մը գործած չեղայ բնաւ ձեր ատածը սիրելով: Հայր, Դուք կարող էք զիս տունէն հեռացնել, բայց սրտիս ոչ ոք կրնայ բռն նստալ: Ձեր այս որոշումն կը վախճամ որ ծանր հետեւութիւններ ունենայ»:

(Շարունակելի)

ՄԵՐ ԿՏՐՈՆՆԵՐԸ

ՏԻԳՐԻՍԸ Հայ գաղթականութեան մէջ տարածելու համար վարչութիւնն որոշած է կտրոն մը հրատարակել թերթիս երրորդ երեսին վրայ 2 սէնթի արժողութեամբ, և իբր դրամ ընդունիլ զայն՝ փոխարէնն ի ստորեւ ծանուցուած ապրանքներէն նուէր տալու պայմանաւ, իրենց որոշեալ գներով: Այս կտրոններու գինն քանի մը շաբաթէն մտադիր ենք 1 սէնթի իջեցունել: Անոնք որ կուզեն օգտուիլ այս բացառիկ առիթէն, աշխատելու են ձեռք ձգել ՏԻԳՐԻՍԻ այս կտրոններէն որչափ որ կարելի է, ու պահել զանոնք:


Ամէն 10 կտրոնի հետ 2 հատ 2 սէնթնոց նամակագրոյ մը ղրկուելու է մեզ ապրանք փոխադրութեան ծախուց համար:

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Հետեւեալներն աննշան մաս մ'են այն բազմատեսակ ապրանքաց զորս ունինք մեր տրամադրութեան տակ իբր նուէր տալու համար մեր կտրոններու փոխարէն: Ասոնց բոլորի ցուցակը անկարելի է հրատարակել ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ: Այս մասին գաղափար մը տալու համար կը բաւականանանք ըսել թէ այդ ապրանքաց կատարեալ ցանկը 126 երեսներէ բաղկացեալ տետրակ մ'է, որոյ մէջ ոչ միայն գիններն կան, այլ ամէն իրերու պատկերներն և բացատրութիւնները գրուած են անգլիերէն լեզուով: Այս տետրակներէ կը ղրկենք փափաքողաց 5 սէնթ նամակաբաժնի փոխարէն:


Մեր ամէն տեսակ ապրանքներէն կը յղենք նաև ամէն անոնց որք կտրոն չ'ունենալով՝ դրամ կամ նամակագրոյ մը կը ղրկեն արժէքին փոխարէն: Փոխադրութեան ծախքը գնողնեմուն վրայ է:

ԱՄԵՐԻԿԱՆ ԺԱՄԱՅՈՅՑ



Գին 1 ՏՈՒԱՐ ՄԻԱՄՆ

ՄԵՆԻ ԽԱՂԱՂԱՍԻ ԺՈՂՈՎՈՐԸ ԵՆՔ. և ստորճանակի պէտքը քիչ անգամ կը զգանք: Պէտք է հատ մ'ունենալ սակայն, զի անոր պէտքը կենաց և մահու խնդիր է երբեմն: Աժան տեսակներ ունինք,




ԲԱՅԵՆ ՍԱՂԱՂԱՍԻ 1 ՏՈՒ 75 ՍԹ

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Արանց և տիկնանց համար յատուկ զմեղիներ, մատանիներ, զանազան կոճակներն ևն. բազմատեսակ են:

Այս զմեղիներու հատը միայն




ԿԱՐԺԷ 24 ՍԷՆԹ


ԱՅՍ ԿԱՆԱՆՑ ԱՍԵՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



պէտք չէ բացատրութիւն: Կանայք գիտեն անոնց կարեւորութիւնն:




Կ'արժէ հատը միայն 52 ՍԷՆԹ



կամ 13 հատ կտրոն զորս կարելի է բոլորովին ՁՐԻ ձեռք ձգել:

ՉԱՆԱՉԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐ

Մեր տրամադրութեան ներքեւ ունինք երգելոն, կիթառ, մանտոլին, արմոնիքա և ուրիշ նուազարաններ ղիւրամատչելի գներով: Մեր կտրոնները ծախու կառնեն զայնս Սա պատկեր խեղճ ներկայացուցիչ մ'է իրականին:



ԱՍՈՐ ԳԻՆՆ Է 2 ՏՈՒԱՐ

Այս ապրանքներն դրամով ալ կը վաճառուին: